ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1956 Общественные науки

Ա. Հարությունյան

ԷՋԵՐ Ա. Ա. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ (ԿԱՄՈՅԻ) ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռուսական բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի բովում շատ հերոսներ ծնվեցին։ «Գրանք—Բարուշկինի նման մարդիկ են։ Դրանք այն մարդիկն են, որոնք ոչ թե մի կամ երկու տարի, այլ ամբողջ 10 տարի ռևոլյուցիայից առաջ իրենց ամբողջապես նվիրել են բանվոր դասակարգի ազատագրման համար մղվող պայքարին»[1]։

Պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներների այդ հիանալի պլեադայի ներկայացուցիչներից էր Կամոն՝ Սիմոն Տեր-Պետրոսյանը։

Ընկ. Ա. Միկոյանը ՍՄԿՊ XX համագումարում նշեց, որ Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման գործիչներից ոմանք «քմահաճորեն բարձրացվում էին, իսկ մյուսները ամենևին չէին հիշատակվում»[2]։ Այսպես, գրեթե անտեսվել է նաև Կամոյի ռևոլյուցիոն գործունեությունը։

Կամոյի կյանքը և ռևոլյուցիոն գործունեությունը սերտորեն կապված են Ռուսաստանի բանվորական շարժման հետ։ Կամոյի կյանքը լի է արտասովոր սխրագործություններով և պրոլետարական անձնուրաց պայքարի հարուստ օրինակներով։ Բավական է հիշատակել, որ Կամոն թշնամու ձեռքով հինգ անգամ վիրավորվել է, ավելի քան երկու տարի ապրել հոգեբուժական հիվանդանոցում որպես «խելագար» ու ենթարկվել աներևակայելի խոշտանգումների։ Չորս անգամ դատապարտվել է մահապատժի, որը փոխարինվել է քսանամյա տաժանակրությամբ։

Չնայած այս բոլորին, նա հավատարիմ է մնացել իր սկզբունքներին, անդավաճան շարունակել է պայքարել ռևոլյուցիայի հաղթանակի համար։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հիմնադիր ու առաջնորդ մեծ Լենինը Սիմոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ տածում էր անսահման հավատ և վստահություն։ Կամոն ամենասերտ կապերով կապված էր Վ. Ի. Լենինի հետ։ «...Հիշում եմ, թե ինչպես այդ պլանների մասին,—ասում էր Կամոյին նվիրված դամբանական ճառում Գ. Կ. Օրջոնիկիձեն,—դու խոսում էիր ռևոլյուցիայի առաջնորդ Լենինի հետ, որը ջերմորեն սիրում է քեզ...»[3]։

Կամոյին բարձր էր գնահատում մեր պարտիան, մեր ժողովուրդը։ «Ինձ համար,—գրում էր պրոլետարական մեծ գրող Մ. Գորկին,—Կամոն այն ռևոլյուցիոներներից է, որոնց համար ապագան ավելի ռեալ է, քան ներկան։ Այդ բնավ չի նշանակում, թե նրանք երազում էին. ո՛չ, այդ նշանակում է, որ նրանց էմոցիոնալ, դասակարգային ռևոլյուցիոնությունը

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 16, էջ 476։
[2] Ա. Ի. Միկոյան, *Ճառ ՍՄԿՊ XX համագումարում*։
[3] Գ. Կ. Օրջոնիկիձե, *Ընտիր երկեր և ճառեր*, էջ 97։

այնպես ներպաշնակ և ամուր է կազմակերպված, որ անունդ է տալիս բանականությանը, հոդ է ծառայում նրա աճման համար, կարծես թե նրանից առաջ է ընթանում։ Ռևոլյուցիոն աշխատանքից դուրս այն ամբողջ գործունեությունը, որի մեջ ապրում է իրենց դասակարգը, նրանց թվում է ինչ-որ վատթար երազի, մղձավանջի նման մի բան, իսկ այն ռեալ իրականությունը, որի մեջ իրենք ապրում են,—դա սոցիալիստական ապագան է»։

Կամո—Ս. Ա. Տեր-Պետրոսյան

I

Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյանը ծնվել է 1882 թվականի մայիսի 15-ին Թիֆլիսի Նահանգի Ռորի քաղաքում։

Սիմոնը 7 տարեկան էր, երբ նրան տվեցին հայոց ծխական դպրոց, իսկ 11 տարեկան հասակում նա ընդունվեց հայկական քաղաքային դպրոց, որտեղ և ստացավ իր նախնական կրթությունը։

Սիմոնն առանձին սիրով ուսումնասիրում է ռուսերեն լեզուն. ծնողները նրան հանձնում են հատուկ ուսուցչի, որպեսզի լավ տիրապետի ռուսերեն լեզվին։ Ռրի առնելով իր դպրոցական տարիների կյանքը, Կամոն նշել է. «Ես չափազանց սիրում էի աշխարհագրությունը, ուժգնորեն զբաղվում էի դրանով։ Երազում էի ճանապարհորդությունների մասին։ Միթե կարելի է մարդ անվանել նրան, ով չի շրջապատել ամբողջ աշխարհը։

Ուզում էի տեսնել Փարիզը, Հունաստանը, Հռոմը... Եվ միևնույն ժամանակ ինձ դուր էին գալիս զորահանդեսները»[1]։

Նույն ինքնակենսագրության մեջ նա շարունակում է. «...Ես շատ էի սիրում Հունաստանի պատմությունը և այդ սերը հետագայում ընդմիշտ պահպանվեց։ Երբ ես 1912 թվականին եղա Հունաստանում, անսահման սիրով էի դիտում այդ երկիրը, հրճվում էի նրա ավերակներով և մի քանի անգամ այցելեցի Պարթենոնը»[2]։

Ծխական դպրոցում սովորելու տարիներին դպրոցից դուրս նա շփվում է դեմոկրատական տարրերի հետ։ Երբ իրենց ընտանիքը աղքատանում է և այլևս Գորի քաղաքում ապրելու հնարավորություն չի ունենում, Սիմոնը գալիս է Թիֆլիս՝ սովորելու։

Թիֆլիսում նա ծանոթանում է սոցիալ-դեմոկրատական մի շարք գործիչների և առաջավոր բանվորների հետ։ Նա մոտիկ հարաբերություններ է հաստատում Ի. Ստալինի, Լ. Կեցխովելու, Ստ. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ս. Սպանդարյանի ու լենինյան-իսկրայական կազմակերպությունների մի շարք այլ գործիչների հետ։

Անդրկովկասի մարքսիստական կազմակերպությունները ամենասերտ կերպով կապված՝ էին Վ. Ի. Լենինի հետ և նրա ղեկավարությամբ կազմակերպում էին երկրամասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարն ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի։ Այդ պայքարի ընթացքում լայն գործունեություն ծավալեց Ս. Տեր-Պետրոսյանը, որը, դեռևս 1898 թվականից սկսած, սերտորեն կապված էր բանվորական խմբերի հետ և նրանց մեջ տանում էր քաղաքական-կազմակերպչական խոշոր աշխատանք։

Մի շարք նոր փաստաթղթեր, որոնք վերջին ժամանակաշրջանում հայտնաբերված են Սովետական Միության արխիվներում, վկայում են, որ սկսած 1901 թվականի հոկտեմբեր ամսից, այսինքն՝ այն պահից, երբ Կամոն ընդունվել է ՌՍԴՐՊ շարքերը, նա քաղաքական ղեկավար ակտիվ աշխատանք է կատարել՝ սկզբում Անդրկովկասում, այնուհետև՝ Ռուսաստանում։

Գ. Մելիք-Գրիգորյանը[3] հիշում է, որ 1902 թվականին Կամոյի անմիջական նախաձեռնությամբ Մ. Գրիգորյանի բնակարանում, որը գտնվում էր Թիֆլիսի Կիրպիչնի նրբանցքի № 3 շենքում հիմնադրվել է մարքսիստական գրադարան, որտեղ Մարքսի, Էնգելսի, Լենինի գրքերից բացի, կային նաև մեծ քանակությամբ կոչեր ու պրոկլամացիաներ՝ նվիրված «Մայիսի տոնին», «8-ժամյա բանվորական օրվանց» և բանվորական շարժման այլ հարցերին։ Կամոյի հանձնարարությամբ Թիֆլիսի հողաչափական դպրոցի սովորողները կոչերը տարածում էին քաղաքի բազմաթիվ թաղամասերում։

1903 թվականին է՛լ ավելի լայն ծավալ է ստանում Կամոյի ռևոլյուցիոն գործունեությունը։ Նրան վիճակվում է աշխատել ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեում, կազմակերպել Միութենական Կոմիտեի տպարանը, ինչպես և անմիջական մասնակցություն ունենալ պարտիայի երկրորդ համագումարին դելեգատներ ուղարկելու գործին։

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 31, գ. 3, թ. 6 (տես Կամոյի «Ինքնակենսագրությունը»)։

[2] Նույն տեղում, էջ 2։

[3] Գ. Մելիք-Գրիգորյանը ՌՍԴԲՊ անդամ է 1904 թվականից։ Այժմ աշխատում է որպես Անդրկովկասյան երկաթգծի Երևանի բաժանմունքի սանիտարական բաժնի պետ։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի հանձնարարությամբ Կամոն 1903 թվականին եռանդուն աշխատանք է տանում մարքսիստական գրականությունը Անդրկովկասում տարածելու, լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին միմյանց հետ կապելու ուղղությամբ։

Այդ ժամանակաշրջանում իր կատարած աշխատանքների մասին Կամոն գրել է. «Սկզբում ես կատարում էի ընկերների փոքրիկ հանձնարարությունները. իմանում էի, թե որտեղ են կազմակերպվում խմբակները, հայտնում այդ խմբակներին մասնակցողների հասցեները։ 1903 թվականի... ամռանը պարտիային հարկավոր էր աննկատելի կերպով պրոկլամացիաներ ցրել։ Ես ձեռնարկեցի այդ գործին և բարեհաջող կատարեցի այն։ Պրոկլամացիաները ցրվեցին Հավլաբարի կամրջի վրա։ Օգնում էի անլեգալ գրադարանների կազմակերպմանը»[1]։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեի որոշմամբ Կամոյին հանձնարարվում է հիմնադրել մի քանի տպարաններ։ Նա այս ուղղությամբ կատարում է խոշոր աշխատանք։ Նրան հաջողվում է Բեյրութովկի փողոցում, բժիշկ Ուշակովի բնակարանում, հիմնել գաղտնի տպարան և ձեռնարկել պրոկլամացիաների ու կոչերի հրատարակման գործին։ Երբ ոստիկանությունը իմանում է տպարանի գոյության մասին, Կամոն ս. Սարգիս եկեղեցու տիրայու Հովսեփ Վախտանգյանի օգնությամբ տպարանը փոխադրում է եկեղեցու շենքը։ «Երբ մեկ անգամ ներս մտա Հովսեփի բնակարանին կից սենյակը, գրում էր ժողովրդական դերասան Դավրոշը։—ո՞ զարմանք, ինչ եմ տեսնում, պատի տակ դրված էր ձեռքի տպագրիչը... Կամոն կապույտ գոգնոցը կապած տպում էր, հա տպում թռուցիկներ։ Այդ սենյակի ամբողջ հատակը ծածկված էր թռուցիկներով»[2]։

1903 թվականին Կամոյին հաջողվում է կարգի դցել հայերեն գրքերի տպագրության գործը։

1903 թվականի ընթացքում Կամոյի նախաձեռնությամբ ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեն հիմնում է 11 տպարան[3] երկրամասի այլուս քաղաքներում։

Վ. Ի. Լենինը ողջունում է Կովկասի անլեգալ տպարանների գործունեությունը։ 1901 թվականի ամռանը Լենինը գրում է, որ ինքը մանրամասն հետաքրքրվել է «Իսկրան»-ն Կովկասում տպագրելու հարցով և պատրաստ է պաշտպանելու այդ գործը։

Վ. Ի. Լենինի ղեկավարած «Պրոլետարիա» թերթի խմբագրական հոդվածում ասված է. «Ջերմորեն ողջունում ենք Կովկասյան Միության հրատարակչական գործունեության ընդարձակումը և նրան ցանկանում ենք հետագա հաջողություններ՝ պարտիականությունը Կովկասում վերականգնելու գործում»[4]։

Վ. Ի. Լենինը 1903 թվականի հոկտեմբերի 20-ին Կովկասյան Միութենական Կոմիտեին ուղղած նամակում հավանություն տալով Անդրկով-

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գործ 5, թ. 4։

[2] Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ժողովրդական դերասան Դավրոշի հիշողությունները, էջ 32։

[3] ՏԵս ՎՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 525, թ. 17։

[4] «Պրոլետարի», № 12, 1905։

կասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության», նշում էր. «Թող Կովկասի ընկերները հաստատորեն ընթանան այն ուղիով, որի վրա նրանք կանգնել են»։

Կամոյին հանձնարարված էր մեծ քանակությամբ մարքսիստական գրականություն փոխադրել Բաթում։ Հենց այդ հանձնարարությունը կատարելու ժամանակ, այն է՝ 1903 թվականի աշնանը[2] Բաթում կայարանում տեղի ունեցավ նրա առաջին ձերբակալությունը։

Կամոյի բանտարկության մասին ժանդարմական փաստաթղթերում ասված է. «...1903 թվականի նոյեմբերի 27-ին, երբ № 5 գնացքը հասավ Բաթում, ժանդարմական կրտսեր սպա Եվտուշենկոն բռնեց այդ գնացքով եկած կարգին հագնված մի պարոնի, որը նրան թվաց կասկածելի, ձեռքին պարուսինե փոքրիկ ճամպրուկ և գործված փոքրիկ զամբյուղ, որոնք բաց անելուց հետո նրանց մեջ գտնվեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի Կովկասյան Միության 1073 թերթ պրոկլամացիաներ՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով, միևնույն բովանդակությամբ։

Այդ պրոկլամացիաները բոլորն էլ թարմ տպված էին, ընդ որում ռուսերեն պրոկլամացիաների կապոցի վերին օրինակի վրա մատիտով գրված էր՝ «Բաթում», հայերեն պրոկլամացիաների կապոցի վերին օրինակի վրա՝ «Փոթի» և վրացերեն պրոկլամացիաների կապոցի վերին օրինակի վրա՝ «Բաթում»։ Այդ երիտասարդի մոտ գտնվեց 1902 թվականի № 93 անձնագրային գրքույկը՝ Դորի քաղաքի քահանայի թոռ Սիմոն Արշակովիչ Տեր-Պետրոսովի անունով»[3]։

Կամոյի հետ բանտում եղած մի շարք ռևոլյուցիոն մարտիկներ իրենց հիշողություններում պատմում են, որ Կամոն այնտեղ ևս ռևոլյուցիոն աշխատանք էր կատարում։ Նա կազմակերպում էր զրույցներ, մտքերի փոխանակություններ և իր շուրջը համախմբում քաղաքական բանտարկյալներին՝ թշնամու դեմ նոր պայքարի ելնելու համար։

«Երբ Կամոն փախավ բանտից,—ասում է նրա հետ բանտարկվածներից մեկը,—ես զրկվեցի շատ լավ ընկերոջից, ուսուցչից և անսովոր ուրախ մարդուց։ Կամոն հազվադեպ էր մաղձի ենթարկվում։ Նա երազում էր շուտով հեռանալ բանտից և նորից նետվել տնտեսական ու քաղաքական պայքարի ջրապտույտի մեջ»[4]։

Եվ իսկապես, Բաթումի բանտում 9 ամիս մնալուց հետո, Կամոյին հաջողվեց փախչել։ «Երբեք չեմ մոռանա ազատության այն հրաշալի զգացմունքը, որ զգացի, երբ թաց պատի վրայով։ Արևը փայլում էր, մոտիկում ծովը նոհվում էր և ազատությո՜ւն, լիակատար ազատո՜ւթյուն բանտից հետո... Երբեք չեմ ապրել ուրախության այդպիսի զգացմունքը»[5],—գրում էր Կամոն։

Կամոյի փախուստը խիստ տագնապի մեջ է գցում ոստիկանությանը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 198։

[2] ՏԵՍ ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 31, գ. 320, թ. 25։

[3] Վրաց. ՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 31, գ. 320, թ. 2—3։

[4] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 5, թ. 8։

[5] Նույն տեղում, թ. 7։

Ոստիկանությունը պետական բարձրագույն օրգաններին հայտնում է, որ խստագույն միջոցներ են ձեռնարկված քաղաքական բանտարկյալ Տեր-Պետրոսյանին ձերբակալելու համար, երբայց հետապնդումները դեռևս դրական արդյունք չեն տվել, հետախուզությունը շարունակվում է»[1]։

II

1905 թվականի հունվարին Ռուսաստանում սկսվեց ռևոլյուցիան։

Ռուսական առաջին ռևոլյուցիան լայն արձագանք գտավ և Անդրկովկասում։ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուսական հերոսական պրոլետարիատի օրինակով, պայքարի ելան ցարիզմի և կապիտալիզմի դեմ։

Կամոն մոտիկ մասնակցություն է ունենում Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին՝ ընդդեմ ինքնակալության։ Նա ակտիվ պայքար է մղում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ, որոնք հրահրում էին հայ-թյուրքական ընդհարումները։ Աշխատավորների ինտերնացիոնալ միտինգներում Ի. Ստալինի, Ս. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ա. Ջափարիձեի, Ի. Ֆիոլետովի, Ս. Օրջոնիկիձեի, Մ. Ազիզբեկովի և ուրիշների հետ միասին հանդես էր գալիս նաև Կամոն, կոչ անելով՝ զենքը ուղղել ոչ թե միմյանց դեմ, այլ ցարական ինքնակալության դեմ։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեն առանձնացրեց մի խումբ ընկերների, որոնք Կամոյի ղեկավարությամբ Անդրկովկասի գանգան շրջաններում և քաղաքներում քաղաքական աշխատանք էին կազմակերպում աշխատավորների շրջանում, ամրապնդում եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Միայն Թիֆլիսում և նրա մոտակա շրջաններում Կամոյին հաջողվեց բանվորների ու գյուղացիների մեջ տարածել շուրջ 23 հազար բոլշևիկյան թռուցիկ, որոնք ուղղված էին հայ-թյուրքական կոտորածների և արյունարբու ցարիզմի դեմ։

1905 թվականի փետրվարին Կամոն ակտիվ կերպով մասնակցում է Գոլովինսկի պողոտայում բոլշևիկների կողմից կազմակերպված հակակառավարական խոշոր ցույցին։ Այդ պատմական ցույցի մասին Կամոն գրել է. «Այստեղ ինձ շրջապատեցին մի քանի ազնիվ ընկերներ և ես բարձրացրի դրոշը ...մեզ մոտեցան երկու բարձրահասակ երիտասարդներ և ես կանգնեցի նրանց ուսերի վրա, ու այդպիսով մենք հասանք փոխարքայի պալատին։ Այստեղ ամբողջ հասարակությունը, ոչ պակաս քան 10.000 մարդ, կանգ առավ և ես... ճառ արտասանեցի։ Ես բացատրում էի կոտորածի նշանակությունը»։

1905—1907 թթ. ռևոլյուցիայի ընթացքում Կամոն լրիվ կերպով դրսևորեց իր կազմակերպչական ընդունակությունները։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները չափազանց բարձր գնահատեցին

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 671, թ. 10։
2920

[2] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 5, թ. 7։

դրանք և Կամոյին վստահեցին արտասահմանից Ռուսաստան զենք փոխադրելու դժվարին, բայց պատասխանատու գործը։

Ոստիկանությունը զենքի այդպիսի պահեստներից մեկը հայտնաբերեց 1906 թվականի ապրիլ ամսին, Թիֆլիսի Պետրովսկայա փողոցում, որտեղ կային 245 լցված ռումբ, 720 մարտական փամփուշտ, շառաչյուն սնդիկի 1067 հատ պարկուճ և ռումբ լցնելու համար հարկավոր բոլոր նյութերը[1]։ Բաթումի նահանգապետը Վորոնցով-Դաշկովին հաղորդում էր, որ իրոք Փոթի քաղաքում հայտնաբերել են «...1700 պահեստային հրացան և 200 հազար փամփուշտ...»։ Նա հաղորդում է նաև, որ զենքի մի մասը ուղարկված է Նովոսենական կայարանը։ Զենքի այդ պահեստները ստեղծվել էին Կամոյի անմիջական ղեկավարությամբ։

Անդրկովկասում վինված ապստամբության ամենախոշոր օջախներից մեկը հանդիսացավ Թիֆլիսի բանվորական ռայոնը՝ Նաձալադևին, որը ամբողջապես գտնվում էր ապստամբ բանվորների ձեռքում։ Այդ ապըստամբության ընթացքում դրսևորվեցին նաև Կամոյի ռազմական գիտելիքները և ընդունակությունները։

Չնայած ծանր պայմաններին, բանվորական վինված ջոկատները Կամոյի, Մ. Բոչորիձեի, Ռ. Թելիայի և ուրիշների ղեկավարությամբ շարունակում էին համառ պայքարը։

Թիֆլիսի բանվորների 1905 թվականի դեկտեմբերի 18-ի (31-ի) զինված ապստամբության ժամանակ ծանր վիրավորվեց նաև Կամոն։ Երբ կազակները մոտեցան նրան, նա ուժասպառ ընկած էր, չէր կարողանում շարժվել։ Կազակները որոշեցին Կամոյին կենդանի թողնել, բայց կտրել քիթը։

Վիրավոր և ֆիզիկապես ուժասպառ վիճակում Կամոյին տեղափոխեցին քաղաքային բանտ։ Միայն մի քանի օրից հետո նա ուշքի եկավ և Մետեխի բանտում նորից միտք հղացավ ոչ միայն ապրել, այլև ակտիվ գործել հանուն ռևոլյուցիայի հաղթանակի։

Նա որոշեց, ինչ գնով էլ որ լինի, փախչել բանտից և նորից նետվել բանվորների ռևոլյուցիոն պայքարի մեջ և այդպես էլ արեց։

1906 թվականին գարնանը Կամոն առաջին անգամ անձամբ հանդիպեց Վ. Ի. Լենինի հետ։ Նա Վ. Ի. Լենինին հանգամանորեն զեկուցեց Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին և ստացավ համապատասխան ցուցումներ։ Վ. Ի. Լենինը Կամոյի վրա արտասովոր տպավորություն թողեց. այդ օրվանից նա անդուլ պայքար մղեց լենինիզմի հաղթանակի համար։

Վ. Ի. Լենինի ցուցումով Կամոն մեկնեց Բուլգարիա՝ Ռուսաստան զենք փոխադրելու համար[3]։

«Մեկ անգամ միայն,—գրում է Ն. Կ. Կրուպսկայան,—հանդիպավայրը եկավ Կամոն։ Կամոն Իլյիչի ու մեզ համար նվեր էր բերել ձմերուկ և ինչ որ շաքարացած ընկույզներ։ «Մորաքույրս է ուղարկել»,—բացատրեց ամաչկոտությամբ Կամոն։ Կամոն հաճախ գնում էր Ֆինլանդիայից Պետեր,

---

[1] Վրաց. ՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 1, գ. 116, թ. 2։
[2] Վրաց. ՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 63, գ. 6, թ. 101։
[3] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊԳԱ, ֆ. 22, գ. 476[13], թ. 114։

միշտ իր հետ զենք էր վերցնում և մայրս ամեն անգամ առանձին խնամքով ատրճանակներ էր կապում նրա մեջքին»[1]։

Նույն 1906 թվականի ապրիլին Ստոկհոլմում տեղի ունեցած միավորիչ համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքներին Կամոն ակտիվ մասնակցություն ունեցավ։ Պարտիական կազմակերպության հանձնարարությամբ նա աջակցեց համագումարի դելեգատների Ստոկհոլմ գալուն։

1906 թվականի դեկտեմբեր ամսին նա վերադարձավ Կովկաս, իր հետ բերելով Վ. Ի. Լենինի մարտական ցուցումները ռեոլյուցիոն աշխատանքի հետագա կազմակերպման մասին։

Պարտիայի ֆինանսական դրությունը բարելավելու նպատակով Կամոն հանդես բերեց մեծ խիզախություն։ 1907 թվականի հունիսի 13-ին, ժամը 12-ին տեղեկություն ստացվեց, որ երկաթուղային կայարանից պետական բանկ է փոխադրվում 250 հազար ռուբլի։ Կամոյի ազդանշանով մարտական ջոկատը գործի անցավ և մեկը մյուսի հետևից պայթեցին ռումբերը, որի հետևանքով առաջ եկավ թանձր ծուխ, մթնեց Թիֆլիսի Երևանյան հրապարակը, իսկ այդ ժամանակ Կամոն մոտեցավ կառքին, վերցրեց 250 հազար ռուբլին ու Մարո Բոչորիձեի հետ անհետացան։ «Ըստ որում,—ասված է ժանդարմական փաստաթղթերից մեկում,—1907 թվականի հունիսին Թիֆլիս քաղաքում 250 հազար ռուբլու էքսպրոպրիացիայի ժամանակ խոշոր դեր խաղաց... Կամոնն»[2]։ Այնուհետև նշված է, որ «նա հանդես էր գալիս միանգամայն ինքնուրույն, իր սեփական նախաձեռնությամբ։ Բայց այն ամենը, որ նա պետք է աներ և ինչին որ պետք է հասներ, նա նկատի ուներ անել պարտիայի համար, ի կատարումն նրա խնդիրների և գոյություն ունեցող կառավարությունը տապալելու նրա վերջնական նպատակի»[3]։

1907 թվականի սկզբին Կամոն ապահովագրական ընկերության գործակալ Դմիտրի Միրսկու անձնագրով մեկնեց Բեռլին։

Սակայն մի քանի ամիս Բեռլինում մնալուց հետո նա պրովակատոր Յա. Ա. Ժիտոմիրսկու մատնությամբ 1907 թվականի նոյեմբերի 9-ին գերմանական ոստիկանության կողմից ձերբակալվեց։

«Նոր տոմարով սույն թվականի նոյեմբերի 9-ին,— ասված է ժանդարմական դեկուցագրում,—Բեռլինում բռնվել է մի հայտնի անձնավորություն, որն իրեն ձևացրել է որպես ապահովագրական գործակալ և ներկայացրել է № 193 Բ. Բ. 7—1302 անձնագիրը Դմիտրի Միրսկու անունով, տրված Թիֆլիսում ավստրո-հունգարական հյուպատոսության կողմից 1907 թվականի օգոստոսի 20-ին»[4]։

«Խուզարկության ժամանակ Միրսկու մոտ հայտնաբերված են 29 բրոշյուր և թերթիկներ, մեծ մասամբ հրատարակված սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի անունից, մեկական օրինակներ և 18

---

[1] Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, 1933, էջ 233—234։

[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 525, թ. 17։

[3] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 325, թ. 89։

[4] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 525, թ. 18։

«բացիկ» միաումնավոր բովանդակությամբ»[1]։ Հայտնաբերվեցին նաև պայթուցիկ նյութեր։

Գերմանական և ռուսական ժանդարմերիային քայլ առ քայլ հաջողվում է Կամոյի ռևոլյուցիոն գործունեության մասին նորանոր փաստեր հայտնաբերել։ Դրանց համաձայն, Կամոյին մեղադրում էին ամենից առաջ այն բանում, որ նա ՌՍԴԲՊ ակտիվ գործիչներից մեկն է և նպատակ է դրել կատարել պարտիայի ցուցումը՝ մասսաների զինված ապստամբության միջոցով ցարիզմը տապալելու և դեմոկրատական ռեսպուբլիկա ստեղծելու մասին։

Որոշված էր Կամոյին դատել 1907 թվականի նոյեմբերին Բեռլինում, բայց դրանից երկու շաբաթ առաջ նա իրեն ձևացրեց որպես խելագար և այդ պատճառով դատարանը վճռեց նրան փոխադրել բանտի հիվանդանոցը։ Այստեղ Կամոյին վիճակվեցին անօրինակ տանջանքներ ու դաժան փորձություններ։

Ինչ ասես, որ չարեց Կամոն, միայն թե ճանաչվեր որպես խելագար։ Պատռում էր վրայի հագուստը, ջարդում, տաշեղ դարձնում բանտի կահ-կարասին, կծոտում իր ձեռքերը, մինչև ոսկորը...»։

Բազմաթիվ փորձեր կատարելուց հետո, նկատի ունենալով, որ գրականության մեջ և պրակտիկ աշխատանքի ընթացքում գերմանական բժիշկները ու պրոֆեսորները չէին հանդիպել այնպիսի դեպքի, որ նորմալ մարդը կարող է այդպիսի համբերությամբ տանել այդքան ծանր տանջանքներ, ուստի վերջնականապես համոզվեցին, որ Կամոն իրոք հոգեկան ծանր հիվանդ է և հարց բարձրացրին նրան հանձնել ցարական կառավարությանը։

1909 թվականի սեպտեմբերի 21-ին գերմանական կառավարությունը որոշեց Կամոյին հանձնել ռուսական կառավարությանը։

III

Կամոյի կրած բացառիկ տանջանքները և նրա անօրինակ հերոսական վարքագիծը չէին կարող չհրավիրել միջազգային ռևոլյուցիոն կազմակերպությունների ու գործիչների ուշադրությունը։

Միջազգային պրոլետարիատի և կոմունիստական շարժման առաջնորդ Վ. Ի. Լենինը հատուկ հոգատարություն և մեծ ուշադրություն հանդես բերեց Կամոյի նկատմամբ։

Վ. Ի. Լենինի ցուցումով Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների և Ռուսաստանի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները լայն կամպանիա ծավալեցին Կամոյի կյանքը փրկելու համար։

Վ. Ի. Լենինի բացառիկ հոգատարության մասին է վկայում հետևյալ փաստաթուղթը. «Իլյիչը շատ էր սիրում և գնահատում Կամոյին, ասում էր, որ պետք է ձեռք առնել բոլոր միջոցները Կամոյին փրկելու համար։ Վլադիմիր Իլյիչը Լիտվինովին հանձնարարեց դիմել Կ. Լիբկնեխտին Կամոյի պաշտպանությունը Բեռլինում կազմակերպելու համար։ Պաշտոնական բանակցությունների համար Կ. Լիբկնեխտն առաջադրեց Օսկար

[1] Վրաց. ՍՍՌ, ԿՊԱ, ֆ. 27, օպ. 1, գ. 949, թ. 82։
[2] «Մարտակոչ», № 118, 1923։

Կոնի թեկնածությունը, իսկ ինքը ձեռնամուխ եղավ ներգործելու մամուլի և պարտիական վերնախավերի վրա[1]։

Կ. Լիբկնեխտի առաջարկով Կամոյի կյանքի փրկության գործը հանձնարարվեց Օսկար Կոնին, որը ճանաչված էր Գերմանիայի ոևոլյուցիոն սոցիալ-դեմոկատիայի կողմից և որի նկատմամբ հատկապես Լիբկնեխտը մեծ վստահություն ուներ։

Ջափաղանց հուզիչ եղավ Կամոյի և Օսկար Կոնի առաջին հանդիպումը բանտում։

Օսկար Կոնը Կամոյից ստացած իր տպավորությունները մեծ ոգևորությամբ պատմեց գերմանական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարներին և Գերմանիայում գտնվող ռուսական բոլշևիկներին։ Կոնը նրանց պատմում էր Կամոյի տաղանդի և բացառիկ ամուր կամքի մասին։ Բոլոր ուժերով պետք է աշխատել փրկել Կամոյին,—ասում էր նա։ Հասկանալով Կոնի բացառիկ հոգատարությունը իր նկատմամբ, Կամոն սկսեց նրան պատմել իր վիճակի և առաջիկայում ևս մինչև վերջը անհողդողդ մնալու մասին։ Նա Կոնին պատմեց, որ ավելի քան 9 օր ղրոյից ցածր ջերմաստիճան ունեցող նկուղային խոնավ սենյակում բոլորովին մերկ մնալուց հետո էլ իրեն լավ է զգում։

Միջազգային բանվորական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Կ. Լիբկնեխտը մի շարք ոևոլյուցիոն մարտիկների հետ միասին գերմանական ռայխստագում հարցապնդում[2] է անում և գերմանական բանվոր դասակարգի անունից պահանջում բանտից ազատել Կամոյին, նրան չհանձնելով ռուսական կառավարությանը։

Գերմանական «Ֆորվերտս» թերթում[3] տպագրվում է Օսկար Կոնի ընդարձակ հոդվածը, որի մեջ նա նշում էր, թե ռուսական կառավարությունը Կամոյին չպետք է պատժի ենթարկի, դրա համար նա չունի անհրաժեշտ փաստեր ու նյութեր և որ, վերջապես, Կամոն ծանր հիվանդ է։

Գերմանական դեմոկրատական ամբողջ մամուլը, հատկապես «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթը՝, արձագանքեց Կոնի այդ հոդվածին։ Թերթերում ընդգծվում էր, որ Գերմանական կառավարությունը ճիշտ չի վարվել՝ Կամոյին հանձնելով ցարական կառավարությանը, որովհետև նրա հանցավորության համար անհրաժեշտ ապացույցներ չկային և, բացի այդ, նախքան դատական պատասխանատվության ենթարկելը, անհրաժեշտ էր նրան բուժել։

Կամոյի կյանքը փրկելու համար եռանդուն գործունեություն ծավալեց նաև «Յումանիտե» թերթը։

Գերմանական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը Օսկար Կոնի միջոցով այդ ժամանակամիջոցում կարողացավ Կամոյի հոգեկան հիվանդության վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, որոնք վավերացված

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 6, թ. 3։

[2] «Խորհրդային Հայաստան», № 163, 1922։

[3] Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 22, գ. 167։

[4] Նույն տեղում։

[5] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 14, գ. 3, թ. 45։

էին Բեռլինի նշանավոր մասնագետների կողմից, ուղարկել Թիֆլիս՝ դատական պրոցեսի ընթացքում հաշվի առնելու համար։

Կամոյի քույրը՝ Ջավահիր Տեր-Պետրոսյանը[1] գրում է. «Օսկար Կոնը անմիջապես կապ հաստատեց ինձ հետ, ես նրան տեղեկացնում էի Թիֆլիսում ստեղծված գրության մասին։ Օսկար Կոնը նույնիսկ ինձ ուղարկեց 200 ռուբլի, որպեսզի ես մանրամասն հեռագրեր ուղարկելիս ծախսերից չնեղվեմ»[2]։

Օ. Կոնը հետ գրում էր. «Ուղարկում եմ էքսպերտիզի վերաբերյալ բոլոր հարկավոր փաստաթղթերը։ Հարցապնդում կլինի Ռայխստագում»[3]։

Կամոյի կյանքի փրկության համար Եվրոպայում և Ռուսաստանում ծավալված շարժումը ստիպեց ցարական կառավարությանը հաշվի առնել այդ բոլորը։ Հենց այդ է վկայում 1910 թվականի մայիսի 7-ին Ստոլիպինի գրած նամակը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին։ Նա գրում էր.

«Ողորմած տեր,

Կոմս Իլարիոն Իլարիոնովիչ.

Ներքին գործերի մինիստրությունը սույն թվականի ապրիլի 27-ին № 42 գրությամբ տեղեկացրեց ինձ, որ վերջին օրերս գերմանական դեմոկրատական մամուլը առանձնապես ջերմ վերաբերմունք է ցույց տալիս և զբաղվում է ռուսահպատակ Արշակովիչի (նույն և Միրսկու և Տեր-Պետրոսյանի) ճակատագրի խնդրով, որը Թիֆլիսում պատասխանատվության է ենթարկվում՝ 1907 թ. պետական դրամարկղին պատկանող դրամի ավազակային հափշտակման գործի համար։ Արմատական ուղղության պատկանող «Ֆորվերտս» և «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» օրգանները իիստ լեզվով դատափետում են գերմանական ոստիկանությանը նրա համար, որ Արշակով-Միրսկուն, որին երբ Բեռլինի հոգեբուժական հիվանդանոցից ուղարկեցին, ռուսական իշխանությունը անմիջապես ձերբակալեց նրան։ Գերմանական մամուլն ավելի խիստ լեզու կրանեցնի գերմանական կառավարության նկատմամբ, եթե Միրսկու վերաբերմամբ մահապատիժ որոշվի, ուստի Ներքին Գործերի Մինիստրությունը երկյուղ է կրում, որ այս երևույթը, ռուսական շահերի տեսակետից, կարող է աննպաստ ազդեցություն ունենալ, սնիշխանականներին երկրից արտաքսելու խնդրի վերաբերմամբ»[4]։

Կովկասյան փոխարքա Կոմս Վորոնցով-Դաշկովը Ստոլիպինին պատասխանում է.

«Ինչ վերաբերում է Ներքին գործերի Մինիստրության այն երկյուղին, թե Տեր-Պետրոսյանցին մահապատժի դատապարտելու դեպքում գերմանական կառավարության դեմ գերմանական մամուլի անխուսափելի հարձակումները կարող են ռուսական շահերի համար աննպաստ ազդեցու-

---

[1] «Ջավահիր Արշակի Տեր-Պետրոսյանը 1907 թվականին վերաբերող տեղեկություններ համաձայն բոլշևիկների Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամ էր, զբաղվում էր ագիտացիայով և իր տանը ուներ անլեգալ գրականություն» (տես ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարա. արխիվ, ֆ. 36, գ. 2945, թ. 322)։

[2] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 6, թ. 2 (Տես Ջավահիր Տեր-Պետրոսյանի «Հիշողությունները»)։

[3] Նույն տեղում։

[4] Музей революции, арх., ф. 63, 1910, д. 545.

թյուն գործել ռուս անարխիստներին Գերմանիայից արտաքսելու հարցում, ապա ես նկատի կունենամ այդ նկատառումը, երբ Տեր-Պետրոսյանցի վերաբերյալ զինվորական դատարանի դատավճիռը ներկայացվի իմ հաստատմանը»[1]։

Ինչպես երևում է մեջ բերված այս փաստաթղթից, ցարական կառավարությունը ստիպված էր հաշվի առնել գերմանական դեմոկրատական մամուլի խիստ լեզուն, նկատի ունենալ այն ցարական կառավարության շահերի տեսակետից։

1911 թվականի հուլիսին Կովկասյան զինվորական օկրուգային դատարանը, զինվորական դատարանի նախագահ, գեներալ-մայոր Բոլգինսկու նախագահությամբ, դատական դոնփակ նիստում լսեց Դմիտրի Միրսկու գործը։

Կամոյի դատական պրոցեսի վրա իր ուշադրությունն էր բևեռել ամբողջ հասարակությունը։ Բոլորը սրտատրոփ սպասում էին, թե ինչպես կդրսևորի իրեն Կամոն։ Ցարական դատարանից Կամոն ոչ մի լավ բան չէր սպասում։ Մահ, ահա դատարանի վճիռը—մտածում էր նա։

Զինվորական դատարանը Կամոյին ներկայացրեց մի շարք լուրջ մեղադրանքներ։ Բոլորից ամենակարևորն այն էր, որ նա պայքարում է ցարական կառավարության դեմ և ինչպես ասված է մեղադրական ակտի մեջ, «1907 թվականի հունիսի 13-ին Թիֆլիս քաղաքի Երևանյան հրապարակում 250.000 ռուբլի փողի հափշտակման աչքի ընկնող գործիչներից մեկն էր»[2]։

Զինվորական դատարանը Կամոյին ճանաչեց անբուժելի հոգեկան հիվանդ[3], մինչդեռ, մինչ այդ՝ նրա բացակայությամբ, դատարանը նրան գնդակահարության էր դատապարտել։

Մետեխի բանտում որոշ ժամանակ մնալուց հետո Կամոյին տեղափոխում են Միքայելյան հիվանդանոց, որտեղ նրան ենթարկում են ավելի ծանր, բարբարոսական խոշտանգումների...

Միքայելյան հիվանդանոցի «փորձերը» 1911 թվականի մայիսի 12-ին վերջնականապես բերեցին այն եզրակացության, որ «Տեր-Պետրոսյանը տառապում է մտավոր խանգարումով, որն ունի հիստերիկ պսիխոզ, որը փոխարկվում է այն աստիճանի թուլամտության, որ բացառում է իր կատարած գործողության հատկություններն ու նշանակությունը հասկանալու և իր արարքները ղեկավարելու հնարավորությունը»[4]։

Դատական պրոցեսում բերված մի շարք փաստերի հիման վրա զինվորական դատարանը 1911 թվականին չկարողացավ Տեր-Պետրոսյանին անմիջապես դատական պատասխանատվության ենթարկել։ Ս. Տեր-Պետրոսյանի գործը կրկին հետաձգվեց, իսկ նրան նորից տեղափոխեցին Միքայելյան հիվանդանոցը։

Կամոն ամենասերտ ընկերական կապեր ստեղծեց հիվանդանոցի աշխատակից Իվան Բրագինի հետ, նրա միջոցով Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպությանը հաղորդեց իր առաջիկա ծրագրերի մասին։

---

[1] Музей революции, գ. 545, թ. 1—1։
[2] Վրաց. ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 27, օպ. 1, գ. 949, թ. 82։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում, ֆ. 22, գ. 476, թ. 6։

Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում Կամոն նվաճեց աշխատակիցներից շատերի համակրանքն ու հարգանքը։ Նա սիստեմատիկ կերպով տեղեկություններ էր ստանում պարտիական կյանքի մասին։

1911 թվականի օգոստոսի 15-ին[1] կեսօրվա ժամը 4-ին, ճաշից հետո Կամոն խնդրում է իրեն թույլ տալ զուգարան գնալու։ Իր ընկերների օգնությամբ նա զուգարանի լուսամուտից պարանով իջնում է Դուռ գետի ափը և թաքնվում։

Երբ կառավարական շրջաններում լսում են Կամոյի փախչելու լուրը, մեծ աղմուկ է բարձրանում։ «Մենք ունեինք կարգադրություն Տեր-Պետրոսյանին (Կամոյին) պահել առանձին կամերայում և հատուկ հսկողություն ունենալ»[2] զեկուցում է բանտի պետը։ «Պահում էինք նրան... երկու փականքի տակ»[3]։ Սակայն նա փախավ։

Մի քանի օր Թիֆլիսում մնալուց հետո Կամոն գնում է Բաթում և նավաստիների օգնությամբ թաքնվելով շոգենավի նկուղում, որպես տեխնոլոգիական ուսումնարանի սովորող, մեկնում է «...Փարիզ Իլյիչի հետ խոսելու»[4]։

Կամոն հաջողությամբ հասնում է Փարիզ և ներկայանում Վ. Ի. Լենինին։

Կամոն Վ. Ի. Լենինին պատմում է այն բոլոր տանջանքների մասին, որ կրել էր Բեռլինում և Թիֆլիսի Մետեխի բանտում։ «Իլյիչը լսում էր և խորապես խղճում այդ անձնվեր, համարձակ մարդուն, որը երեխայի նման միամիտ էր, ուներ ջերմ սիրտ, պատրաստ էր մեծամեծ քաջություններ կատարելու և որը բանտից փախչելուց հետո չգիտեր, թե ինչ անի։ Նրա աշխատանքի ծրագրերը ֆանտաստիկական էին։ Իլյիչը չէր առարկում, զգուշությամբ աշխատում էր երկիր իջեցնել նրան, խոսում էր տրանսպորտ կազմակերպելու մասին և այլն»[5]։

Տեսնելով Կամոյի առողջության միանգամայն վատթար վիճակը, Լենինը պահանջում է, որ նա անպայման բուժվի, հոգ է տանում դրամական միջոցների համար, նշում է, թե Բելգիայում ինչպիսի մասնագետների պետք է ներկայանա և այլն։

Տեսնելով Կամոյի վերարկուն, Իլյիչը հարցրեց. «Ունեք արդյոք տաք վերարկու, չէ որ ցուրտ կլինի ձեզ համար նավամատույցի վրա մանգալիս»։ Ինքը Իլյիչը, երբ ճանապարհորդում էր ծովով, անդադար մանգալիս նավամատույցի վրա ետ ու առաջ։ Եվ երբ պարզվեց, որ Կամոն ուրիշ վերարկու չունի, Իլյիչը տվեց նրան իր փափուկ գորշ թիկնոցը, որը մայրն էր ընծայել նրան Ստոկհոլմում և որը առանձնապես դուր էր գալիս Իլյիչին։

Իլյիչի հետ ունեցած խոսակցությունը, նրա փայփայանքը մի քիչ հանգստացրին Կամոյին»[6]։

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 23, գ. 911, հաս. 1, թ. 70։
[2] Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 22, գ. 476, թ. 132։
[3] Նույն տեղում։
[4] Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, 1933, էջ 311։
[5] Նույն տեղում։
[6] Նույն տեղում, էջ 312։

Փարիզում Վ. Ի. Լենինի մոտ Կամոն մնում է շուրջ երկու ամիս։

Փարիզից Կամոն մեկնում է արտասահմանյան մի շարք այլ երկրներ։ Բուժվելուց և կազդուրվելուց հետո, զինված Վ. Ի. Լենինի ցուցումներով, նա որոշում է վերադառնալ Կովկաս։ Որոշ ժամանակ մնում է Շվեյցարիայում, այնուհետև մեկնում է Կ. Պոլիս, բայց այստեղ լուրջ վտանգի է ենթարկվում և նույնիսկ մի քանի օր բանտարկվում և ազատվում է միայն վրացի վանականների միջամտությամբ։

* * *

1912 թվականի գարնանը Կամոն արտասահմանից վերադառնում է Ռուսաստան և Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ծավալում ռևոլյուցիոն գործունեություն։

Այդ նույն թվականի աշնանը, սակայն, նա կրկին բանտարկվում է Թիֆլիսի արվարձանի՝ Կոջորի մոտ անհաջող էքսպրոպրիացիա կատարելու ժամանակ։

1913 թվականի փետրվարի 19-ին սկսվում է Սիմոն Տեր-Պետրոսյանի դատավարությունը։ Դատական գործը բաժանված էր երկու մասի։ Առաջին մասը կոչվում էր «Տեր-Պետրոսյանի փախուստի գործը»[2]։ Այս գործով մեղադրվում էին այն անձինք, որոնք ակտիվ մասնակցություն էին ունեցել Կամոյի փախուստի կազմակերպմանը։

«Տեր-Պետրոսյանի փախուստի գործի» քննությունը տևում է 1913 թվականի փետրվարի 19-ից մինչև 23-ը։ Թիֆլիսի դատական պալատի հատուկ ատյանը՝ ավարտելով գործի քննությունը, որոշում է դատապարտել՝ Կ. Ցինցաձեին և Ի. Բրադինին 6 տարվա տաժանակիր աշխատանքների, իսկ Տեր-Պետրոսյան քույրերին[3] աքսորի, որպես Կամոյի փախուստի ակտիվ կազմակերպիչների[4]։

1913 թվականի մարտի 2-ին Կովկասի զինվորական շրջանային դատարանը Թիֆլիսում սկսեց լսել Կամոյի գործի երկրորդ մասը՝ «Կամո Տեր-Պետրոսյանի գործը»[5]։

Հաղորդման մեջ ասված էր, որ «Սա հայտնի է իր պարտիական «Կամո» ծածկանունով, երկար ժամանակ գործել էր ռևոլյուցիոն կազմակերպությունների մեջ և հռչակված էր իբրև ամեն տեսակ «տեխնիկական» ձեռնարկություններ կազմակերպող»[6]։

Զինվորական դատարանը Կամոյին դատապարտեց պատժի բարձրագույն չափին՝ գնդակահարության[7]։

Երբ հայտարարում են դատարանի վճիռը՝ Կամոյին գնդակահարելու մասին, նա ասում է, որ ինքը չի վախենում... իր հավատը, համոզմունքը

---

[1] Տես Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 23, գ. 911, թ. 90։
[2] «Կովկասի լրաբեր», № 42 (96), 21 փետրվարի, 1913։
[3] Խոսքը վերաբերվում է Զավահիր և Արուսյակ Տեր-Պետրոսյաններին։
[4] Վրաց. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 22, գ. 476, թ. 131։
[5] Նույն տեղում, թ. 136։
[6] Նույն տեղում։
[7] Նույն տեղում, ֆ. 39, գ. 671/2920, թ. 6։

փոխել չի կարող։ «Իմ աստվածը, իմ հավատը սոցիալիզմն է։ Այլ աստված, այլ հավատ ես չունեմ և չեմ կարող ունենալ»[1]։

Դատարանը մահվան չորս վճիռ է կայացրել Կամոյի նկատմամբ։

Կամոյի մահապատժի ի կատար ածման բուն իսկ օրերին, 1913 թվականի փետրվար ամսին, նշվում է Ռոմանովյան տան թագավորության երեք հարյուրամյակը և այդ կապակցությամբ Կամոյի մահավճիռը փոխարինվում է տաժանակիր աշխատանքով։ Վճռի մեջ այդ մասին ասված է. որ «Տեր-Պետրոսյանը հանցավոր է ճանաչված նրան ներկայացված մեղադրանքներում և ցարական մանիֆեստի հիման վրա դատապարտվում է 20 տարվա աքսորի ու տաժանակիր աշխատանքների»[2]։

Այդ առիթով Կամոն ասում է. «Չէի ցանկանա մանիֆեստի հիման վրա ազատվել մահից։ Լավ կլիներ ազատվեի սեփական միջոցներով։ Բայց միևնույնն է—ես երկար չեմ նստի»[3]։

1915 թ. Կամոյին Թիֆլիսից փոխադրում են Խարկովի բանտը։

Փետրվարյան ռևոլյուցիայի հետևանքով Կամոն ազատվում է բանտից։ 1917 թվականի գարնանը Կամոն Խարկովից մեկնեց Մոսկվա և այնուհետև Պետրոգրադ։ Այստեղ Կամոն հանդիպեց Վ. Ի. Լենինին։ Չնայած Վ. Ի. Լենինի ծանրաբեռնվածությանը, նա ժամանակ գտավ Կամոյի հետ զրաղվելու և նշելու նրա գործունեության ծրագիրը, որը կատարելու համար նա լի էր եռանդով ու վճռականությամբ։

Ունենալով Վ. Ի. Լենինի ցուցումները և ոգեշնչված գրանցով, Կամոն անմիջապես մեկնեց Կովկաս։ Վ. Ի. Լենինը զգուշացնում էր Կամոյին, որ անհրաժեշտ է վերականգնել առողջությունը, ապա նոր ձեռնամուխ լինել աշխատանքի։ Երկու ամիս Կովկասում բուժվելուց հետո, Կամոն իսկապես վերականգնեց իր առողջությունը։

1919 թվականի սեպտեմբերի 3-ին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ Կամոյին տրվում է վկայական, որի մեջ նշված է, որ այդ վկայականը տրված է Մոսկվայում՝ Պետրովի ազգանունով[4]։

Վ. Ի. Լենինի կողմից Կամոյին տրված վկայականում նշված է, թե ինքը անձամբ ճանաչում է Կամոյին, գիտե նրա գործունեության մասին և պարտավորեցնում է պարտիական կազմակերպություններին, սովետական և զինվորական օրգաններին լիապես վստահել նրան, անհրաժեշտության դեպքում ցույց տալ համապատասխան աջակցություն։

Այդ վկայականը ամենից առաջ նշանակում էր, որ Վ. Ի. Լենինը անսահման վստահություն և հավատ ուներ դեպի Կամոն։

Կամոն իր ամբողջ էությամբ գիտակցում էր Վ. Ի. Լենինի վստահությունից բղխող խոշոր պատասխանատվությունը պարտիայի ու ժողովրդի առաջ։ Ոգևորված պարտիայի և Վ. Ի. Լենինի ցուցումներով, Կամոն ձեռնամուխ է լինում նոր հանձնարարությունների կատարմանը, սակայն մենշևիկների կառավարությունը Կամոյին ձերբակալում է։ Երկու

---

[1] „Заря Востока", № 926, 1925.

[2] Վրաց. ՍՍՌ, ԿՊԱ ֆ. 22, գ. 476, թ. 127։

[3] ՍՄԿՊ կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալի պարտիական արխիվ, ֆ. 31, գ. 5, թ. 3։

[4] „Заря Востока", № 163 (2672), 1932.

ամիս Մետեխի բանտում նստելուց հետո, Կամոն ազատվեց, բայց ստացել էր ներվերի բորբոքում։ Թիֆլիսից Կամոն մեկնեց Բաքու։

IV

Կամոն նորից մեկնում է Մոսկվա։ Վ. Ի. Լենինը Կամոյին խորհուրդ է տալիս սովորել զինվորական ակադեմիայում, որին ուղարկում է հետևյալ դրությունը.

«Ռեսպուբլիկայի Ռազմահեղափոխական խորհրդին

1919 ամառ։

Ես իրոք ճանաչում եմ մի ընկերոջ, որպես միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախության և հանդի տեր մի մարդու (մանավանդ պայթեցումների ու համարձակ անակնկալ հարձակումների վերաբերմամբ*)։

Առաջարկում եմ

1) Հնարավորություն տալ նրան սովորելու հրամանատարական գործը (ձեռնարկել բոլոր միջոցները արագացնելու համար, առանձնապես դասախոսություններ կարդալ և այլն)։

2) Հանձնարարել նրան կազմակերպել հատուկ ջոկատ թշնամու թիկունքում պայթեցումներ** կատարելու համար։

Ռազմական ակադեմիայում սովորելու նպատակով Կամոն սկսեց հանդուն կերպով պարապել։ Նա մասնագետների ղեկավարությամբ սովորում է ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, պատմություն, գրականություն, ռուսաց լեզու և այլ առարկաներ։ ՍՄԿՊ Կենտկոմին կից ԻՄԷԼՍ-ի Վրացական ֆիլիալում հայտնաբերված է Կամոյի կանաչ գույնի ընդհանուր տետրը, որի մեջ կան նրա մի քանի ուշագրավ գրանցումները։ Այդ տետրի մեջ Կամոն գրել է թելադրություններ և հիշողություններ։ Այդ տետրի մեջ կատարած գրանցումներն ամենից առաջ ցույց են տալիս, որ



Վ. Ի. Լենինի կողմից Կամոյին տրված վկայականը։

* Խոսքը վերաբերում է հայտնի ռևոլյուցիոներ-բոլշևիկ Կամոյին (Ս. Ա. Տեր-Պետրոսյանին)։ Լենինյան ժողովածուի խմբ. ծանոթություններ։

** Եվ այլն։

Կամոն սիրով սկսել է ուսումնասիրել ռուսական կլասիկ գրողների ստեղծագործությունները։

Կամոն շատ է սիրել ժողովրդական առածները։ Նա հատուկ խնամքով արտագրել է ժողովրդական մի քանի առածներ և տվել դրանց վերլուծություններ։

Սակայն Կամոյի այդ տետրը միայն նրա աշխատասիրության մասին չէ, որ վկայում է։ Դա մի քանի նամակների հետ միասին նրա թողած գրեթե միակ գրավոր ժառանգությունն է, որի մեջ կան մի քանի արժեքավոր ինքնուրույն փորձիկ հոդվածներ։ Դրանցից առավել ուշադրության արժանի են մասնավորապես «Պետրոս առաջինը, որպես Ռուսաստանի մեծ բարեփոխիչ», «Անձնական տպավորություններ Սովետների 8-րդ համագումարի մասին», «Կարմիր բանակի նշանակությունն ու կազմը» և այլն։

Կամոն գրում է, որ Պետրոս առաջինը տևանելով ճորտատիրական Ռուսաստանի հետամնացությունը, ձևնամուխ եղավ մի շարք միջոցառումների, անցկացրեց ռեֆորմներ, որոնք Ռուսաստանի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան։

Կամոն հատուկ խնամքով է գրել իր անձնական տպավորությունները Սովետների 8-րդ համագումարի և Վ. Ի. Լենինի զեկուցման մասին։ Նա պատմում է, թե ինչպես 8-րդ համագումարի դելեգատները և հյուրերը չտեսնված խանդավառությամբ դիմավորեցին Վ. Ի. Լենինին ու լարված ուշադրությամբ լսեցին նրա բովանդակալից զեկուցումը։

«Կարմիր Բանակի նշանակությունն ու կազմը» հոդվածում Կամոն նշում է, թե շահագործվող դասակարգերի շահերը պաշտպանող Կարմիր Բանակը աշխարհում առաջին անգամ ստեղծվել է Ռուսաստանում։ Այդ բանակը կազմված է բացառապես աշխատավորներից՝ բանվորներից ու գյուղացիներից։

Կամոն ակտիվ և հետևողական կերպով լծված էր պարտիայի քաղաքականության իրականացման համար մղվող պայքարին։ «...Պետք է պրաղվել տնտեսական նոր քաղաքականությամբ,—որ Իլյիչը (Լենինը) ասում է, նշանակում է անհրաժեշտ է»[1]—հաստատակամորեն ասում էր Կամոն իր կյանքի վերջին օրերին։

* * *

Հինավուրց Թիֆլիս քաղաքը 1922 թվականի հուլիսի 18-ին վկա եղավ մի հսկայական պատմական ազգ երթի։ Դա ռևոլյուցիոն նշանավոր գործիչ Կամոյի հաղվագյուտ թաղման երթն էր, որտեղ ամենայն արժանավորությամբ նշվեց հանգուցյալի ծառայությունները պարտիայի և ժողովրդի առջև։

Նա կույր պատահականության զոհ գնաց ընդամենը 40 տարեկան հասակում, երբ դեռ լի էր անսահման եռանդով, երբ դեռևս մեծ ուժ ու հսկայական կարողություն ուներ ավելի մեծ գործեր կատարելու համար։

1922 թվականի հուլիսի 18-ին Կամոյի դերեզմանի վրա դրվեցին բազմաթիվ պսակներ, որոնց վրա կային շատ հուզող մակագրու-

[1] «Խորհրդային Հայաստան», № 163, 1922։

թյուններ. «Նրա վառ գործերից, քաշած բիբլիական տանջանքներից մենք պսակ հյուսենք ու դնենք նրա գերեզմանի վրա, որպեսզի ամեն անգամ դամբարանի մոտից անցնելիս հիշենք ու ասենք.

— Ահա գերեզմանը մեծ ռևոլյուցիոներ Կամոյի. գնանք նրա անցած դժվարին շավիղներով, հետևենք նրան...»[1]։

Բազմաթիվ պսակների կողքին դրված էին նաև այս պսակները.

«Անմոռանալի Կամոյին՝ Լենինից և Կրուպսկայայից».

«Պրոլետարական ռևոլյուցիայի մշտական ժամապահին—Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի Կենտկոմից»։

---

[1] «Կարմիր աստղ», № 159 (410), 1922։